

ՅՈՒՀԱՆՆԻՍ ՄԱՆԹՈՍԵԱՆ

ՄԵՐ

ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ



891.99

Մ-15

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մն. Մաթիոսեանցի, Պուլիկնակայեա փող. 3.

1910

891:99

NOV 2011

U-15

ՅՈՒՀԱՆՆԵՍ ՄԱԼԽՈՍԵԱՆ

ՄԵՐ

ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ



(884/6)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան ՄԳ. Մաթիոսեանցի, Պուշկինսկայեա փող. 3.

1910

1105 70W 0

15/17

1. Չիզ-ձիզ-ձիզ	3
2. Բողարը	17
3. Հօրեղբայրս	32
4. Արցունքներ	44



10717-57

ՉԻԳ-ՉԻԳ-ՉԻԳ...

I.

1892 թուի խոլերայի սև ու մուխ տարին էր, որ Օսկին-ապլան երեք օրուայ մէջ իրար ետևից գերեզման իջցրեց որդուն ու հարսին. ուր է, իր ձեռով էլ է գերեզման էր դրել՝ ոչինչ. անխիղճ սանխտարները եկան, զօրով նրա ձեռքից խլեցին մեռելները, տարան, առանց քահանայի ու տիրացուի, առանց ժամի ու պատարագի, ջուխտ-ջուխտ սև հողը դրին:

Այդ օրուանից Օսկին-ապլան իր երեք-չորս մանր-մժեղ թոռներով մնաց մեն-մենակ, առանց տէր ու տիրականի: Գիւղում մէկը չկար, մէկը, որ նրանց պահէր-պահպանէր, մեծացնէր-հասցընէր. ինքն էր, Օսկին-ապլան մենակ ինքը, որ թէ իր չոր գլուխն էր պահելու և թէ թոռներին:

Քանի դեռ Օսկին-ապլայի որդին ու հարսը կենդանի էին, աղքատութիւնը դեռ այնքան դուռ ու երթիկ չէր կոխել, բայց հէնց որ նրանք մեռան՝ կասես նա հարամու պէս ներս թափուեց: Օսկին-ապլայի մի-երկու կտոր արտը, որ

դրացիները վերցնում էին մշակելու մի քանի կոտ (պուղ) հաց տալու պայմանով՝ սկսել էին չտալ. չայլըր՝ ով գիւղում գօռբա էր՝ նա էր հասնում հնձում. նրա անասուններից որը սատկեց, որը պարտքի տեղ տարան, մնացին միայն մի-երկու թև հաւը և Օսկին-ապլայի կմախք դարձած ձեռքերը, որ կերակրելու էին այդ չորս-հինգ անգամից բաղկացած ընտանիքը:

Օսկին-ապլան շատ անգամ թոռները տանը թողած գնում էր դրացիների տուն գործ անելու. գործը վերջացնելուց յետոյ երեկոյեան քիչ հաց ու պանիր կամ կերակրեղէն հացի մէջ փաթաթած, կռան տակ դրած գալիս էր տուն: Թոռները նրա ձայնն առնելու պէս վազում էին ընդ առաջ.

— Մամի ջան, մեզի համար ի՞նչ ես բերել ուտելու:

— Լաւ բան, ձագերս—, պատասխանում էր Օսկին-ապլան և մէկի ու միւսի ձեռքից բռնած մտնում ներս, բերած ուտելիքը փռում թոռների առաջ, ինչպէս կուտը հաւի ձագերի առաջ:

Շատ անգամ էլ պատահում էր, որ երբ Օսկին-ապլան ուզում էր գործի գնալ՝ թոռները լաց էին լինում, չէին ուզում տանը մենակ մնալ. Օսկին-ապլան անիծելով, սրտնեղած հետը վերցնում էր նրանցից ամենափոքրին ու այնպէս գնում:

Բայց գիւղում ամեն-անգամ էլ գործ չէր

պատահում, որ Օսկին-ապլան գնար թոռների օրական պարէնը հայթայթէր. այդպիսի դէպքերում նա տոպրակը գցում էր վիզը, ցուպը առնում ձեռքը, բռնում ամենափոքր թոռան ձեռքից, միւսներն էլ ետևը ձգած՝ ընկնում էր գիւղ ժողովարարութիւն անելու:

Եթէ պատահում էր, որ ման եկած ժամանակ որբերից մէկնումէկը յետ էր ընկնում, խաղով լինում՝ Օսկին-ապլան ձեռքը դնում էր ձակատին, նայում հեռացող թոռանը, առանց նրա անունը տալու՝ ձեռով գալու նշան էր անում և, փոխանակ «արի ձագս» ասելու, որ նրա կոչելու սովորական ձևն էր՝ կանչում էր.

— Ձիգ-ձիգ-ձիգ...

Տեսնողները, որ հետաքրքրութեամբ նայում էին նրա վրայ՝ մէկ մէկի ասում էին.

— Օսկին-ապլան էլի թոռները հաւի ձագի պէս գցել է ետևը, ընկել է գիւղը:

— Ի՞նչ անէ խեղճը, ոչ վարող ունի, ոչ ցանող, ոչ տուն ու տեղ պահող, նրա էլ պահողը Աստուած է—, վրայ էր բերում միւսը և շտապում ներս Օսկին-ապլայի համար մի կտոր հաց կամ մի ուրիշ բան դուրս բերելու:

Ապա երբ Օսկին-ապլան մօտենում էր՝ հարցնում էին.

— Օսկին-ապլան, էգ ինչի՞ թոռներուդ ձիգ-ձիգ-ձիգ կը կանչես, հաւի ձագ հօ չէ՞ն:

— Հօրով-մօրով որբ մնացողը հաւի ձագ չէ,

հապա ի՞նչ է. ես էլ, ըշար, հաւի պէս էնոնց ետևս զցած ընկել եմ գեղը ձագերուս բերնի բաժինը մուրալու—. ու առնելով գրացու տուածը՝ մօտենում էր միւս գրացու տան:

II.

Տարուայ չորս եղանակների մէջ Օսկին-ապլայի ամենից շատ սիրածը գարունն էր, երբ նրա մի քանի թև հաւը քիւթիւր-քիւթիւր ձու էին ածում, ապա թուխս նստում, ձագ հանում ու այդ ձուով ու ձագով Օսկին-ապլայի կարիքը հոգում:

Առաւօտները Օսկին-ապլայի թոնրատունը (որի կէսը նրա հաւանոցն էր) կատարեալ հարսանիք էր. նրա միքանի ածան հաւերը այնպէս բարձր-բարձր կըլիւ-կըլիւկացնում էին, այնպէս շամաթա հանում, որ ականջ էին տանում. այդ աղմուկի միջոցին մէկ էլ տեսար կըլիւ-կըլիւկացող հաւերից մէկը թռչում էր բունը, ձայնն իրեն քաշում, փոքր ժամանակ տեղը սուս նրստում ու նորէն, հոպ, ցած թռչում, գնում դուրս: Օսկին-ապլան դիտած տեղից իսկոյն իմանում էր, որ հաւկիթն արդէն պատրաստ է:

Հաւերի ածած հաւկիթները նա խնամքով հաւաքում, պահում էր սնդուկի մէջ և սպասում շարուադարի, որ ծախէր, մի քանի կոպէկ ձեռքերէր:

Օսկին-ապլան իր միքանի ածան հաւերի մէջ ունէր մի ճիւղ-ճերմակ հաւ, որի անունը, նրա

երեսի երկու կողմերի (թշերի) վրայ եղած փետուրների համար, դրել էր «թուշիկ»:

Թուշիկը խոշոր էր, սիրուն, ոտքերը փաշալի (փետրաւոր), կատարը չաթալ. նա որ ման էր դալիս՝ կասես մի սագ լինէր, ծանրութեամբ, ոտքերը շատ դանդաղ գետին դնելով-բարձրացնելով. ապա նրա ածած ձուերը՝.— խոշոր, սիրուն, սպիտակ...

Չարուադարները երբ գալիս էին ձու առնելու՝ հարցնում էին.

— Թուշիկի հաւկիթներից շատ ունի՞ս:

— Ունի՞մ, ունի՞մ, դու առնելէն խաբար տուր—, պատասխանում էր Օսկին-ապլան:

Եւ երբ շարուադարները թուշիկի խոշոր հաւկիթները չէին գտնում ձուերի մէջ՝ դառնում էին.

— Կըսես թուշիկի հաւկիթներից ունի՞մ. ապա ո՞ւր են:

— Այ՛ —, նորից ուզելով նրանց խաբել, ասում էր Օսկին-ապլան և ցոյց էր տալիս ուրիշ ձեռմակ, խոշոր ձուեր:

— Ա՛յ, գրողը քեզի բռնէ, Օսկին-ապլա, որ մեզի երեխայի տեղ չգնես, չխաբես:

Օսկին-ապլան քիչ ամաչում էր, որ իր սուտը բռնում է, նստած տեղում ոլորում, սակայն իսկոյն չէր որոշում տեղից վեր կենալ գնալ թուշիկի ձուերը բերելու:

— Ի՛է, վերկաց բեր, լսւ, հաշուի մէջ մի շայի (5 կոպ.) աւել կըտանք:

Օսկին-ապլան վեր էր կենում թուշիկի ձու-
երը բերելու և սրտի մէջ ուրախանալով խօսում.
«Երկու կողմէկ էլ վրէն աւելացնեմ, ըշտը մի կոճ
թեւի գին է»:

Բայց այդ տարին թուշիկը ինչ որ ձու չէր
ածում. կըլիս-կըլիս կում էր ու՛ պրծաւ...

Օսկին-ապլան մտածմունքի մէջ էր. ի՞նչ
պատահեց թուշիկիս, որ կը կըլիս-կըլիսկայ, բայց
հաւկիթ չի ածէ. եարաբ նազաւր դրին, ա՛նք դի-
պաւ, ի՞նչ եղաւ ալայ հաւերուս գլուխ թուշիկիս:

Եւ մինչ նա աշխատում էր այդ տարի թու-
շիկի ձու չածելու պատճառն իմանալ՝ մէկ օր էլ
տեսաւ, որ թուշիկը չկայ:

Օսկին-ապլան ընկաւ գիւղի մէջ փնտռելու.
էլ դ՛ու, էլ դըկից, էլ հարց, էլ փոճ, էլ ժամ,
էլ մո՛մ, էլ սո՛ւրբ, էլ խո՛ւնկ. չկար ու չկար.
Թուշիկը կորել էր:

Օրեր անցան: Օսկին-ապլան չէր կարողա-
նում մոռանալ իր կորուստը. նա ժամերով շատ
անգամ նստած մնում էր տեղում մտածում.
«Եթար չեմ հասկընայ, թէ յանկարծ ինչ պատա-
հեց, որ լուսի պէս հաւս աներևութ եղաւ. մինչի
ցերեկ էստեղերանքը սաղ-սալամաթ քահլան ձիւ
պէս ման կուգար, քիչ էլ կը կըթ-կըթար, կըսես
թուխս ընկածի պէս ըլիւր, յանկարծ ի՞նչ եղաւ,
որ չիք դարձաւ, ախար ո՞ւր գնաց... կերան, ան-
պատճառ գեղի չափխուն տղէքը բռնեցին կերան.
գրողս ու մահս ուտէին, փորերէն բխաքիմ գուրս

չգայ, բան չեմ ըսէ. էլ ուրիշ հաւ չկար, ի՞նչ է,
որ իմ թուշիկս բռնեցին, չուլամիշ եղան... Ո՞ւր
է, գէշ հաւ ըլիւր՝ էլի ոչինչ, բոլոր հաւերուս
գլուխը, էն ի՞նչ տեսակ ման կուգար, ի՞նչ տե-
սակ հաւկիթ»... յանկարծ մտածմունքի թեւը
կտրում էր նա, երբ յիշում էր, որ այդ տարին
թուշիկը ամենևին ձու չածեց, թէև կը կըլիս-կը-
լիսկար. «գոնէ մի քանի հատ էլ է հաւկիթ
ածած ըլիւր, պահէի, էս է հաւերս կը՛ւթ-կը՛ւթ
կէնեն, թուխս նստելու վրայ են, տակերը դնէի,
ձագ հանէին, թուշիկիս կարօտն առնէի... Ա՛խ,
թուշիկ ջան, եարաբ հիմի որտեղ ես, սա՛ղ ես
թէ մեռած. թէ սաղ ես՝ կըռկռա՛, ձէ՛ն հանէ,
ձերմակ ճտիդ մատաղ, ուռած թշերո՛ւղ մատաղ,
սաչախլի ոտքերուղ մատաղ»... Ու նորից վեր
էր կենում, մի աւելորդ անգամ ևս շրջում, բո-
լոր գուռ ու դըրըցին հարցնում. «ո՞վ գիտէ, բունը
կորցրած հաւ է, գուցէ խառնուել է սրահնրա՛
հաւերուն, մի տեղ մնացել է»...

Բայց իզո՞ւր. թուշիկը չկար ու չկար:

Օսկին-ապլան բոլորովին յոյսը կտրած, ձեռ-
նունայն վերադառնում էր տուն և մաշող կարօ-
տով յիշում կորցրած թուշիկին:

Մի անգամ էլ նա գնաց գարի գցողի (ֆալ-
շու) մօտ:

Յալջին գցեց-գցեց գարիները և ասաց.—
կորուստդ մութ, շատ մութ տեղ է, թէ որ ելնի՛
կը գտնուի:

— Գուցէ կերե՛լ են —, բեկուած սրտով հարց-
քեց Օսկին-ապլան —, զրո՞ղ ուտէին, էլ էնտեղէն
ի՞նչպէս պիտի դուրս գայ:

— Ըշար կըսեմ, է, մութ տեղ է, խիստ
բէթար մութ տեղ, թէ որ լուս աշխարք ընկնի՝
կը գտնիս:

— Ուտող մարդու փորի մէջ էլ մութ տեղ
է. կերե՛լ են, տեղեակ ըսա —, նորից վրայ բերեց
այրուած սրտով Օսկին-ապլան:

— Է՛, էլ չգիտեմ. ֆալս խառնուաւ —, ընդհա-
տեց նրան գարի գցող կինը և գարիները հաւա-
քեց:

Օսկին-ապլան յոյսը կտրած, տխուր սրտով
վերադարձաւ տուն: Ճանապարհին երբ նրա
ուղեղով անցնում էր այն ընկերներ, որ գիւղի չափ-
խուն տղէն դանակը քաշում է թուշիկի բլին,
գլուխը կտրում, որից յետոյ նրա սպիտակ մար-
մինը գետնի երեսին թռիչքներ է գործում, ապա
ընկած մնալով մի տեղում իր վերջին ցնցումներն
է կատարում՝ նա լցւում էր խորը ցաւակցու-
թեամբ, դառն կսկիծով ու սաստիկ ցնցում
ամբողջ մարմնով. և այդ կսկիծը այնքան խոր էր
տպաւորւում նրա հոգու ու սրտի մէջ, որ նա
ամենեւին չէր կարողանում մտքից հանել թուշիկի
կորուստը:

Շատ անգամ էլ նա երազի մէջ տեսնում էր
թուշիկին, որ իբր նա հարևանի դռանը, սայլի
թափքի վրայ կանգնած բարձր-բարձր կըլիս-կըլիս-

կում է, կարծես պատրաստում է ձու ածելու.
ինքը, Օսկին-ապլան մտնելով է նրան բռնելու.
սակայն մինչև որ մօտ է գնում՝ թուշիկը կամ
թռչում է, կամ անհետանում: Օսկին-ապլան
դառը հիասթափութիւնից քնից վեր է թռչում.
ի՞նչ. ոչ հաւ, ոչ բան. մութ գիշեր, ինքը մենակ
չոր անկողնի մէջ պառկած, կողքին երեք-չորս
մանր-մունը թոռները, որոնք մոռ-մոռ ննջում
են: Նա այդ պատրանքից ան է քաշում սրտի խոր-
քից, երեսը խաչակնքում, չար սատանաներից
իրեն ապահովում ու նորից պառկում քնելու:

III.

Թուշիկի կորսուելու օրից անց էր կացել
երկու-երեք շաբաթ. գարունն արդէն հասել էր
իր վերջերին. վարարած գետերը նստել-յատակուել
էին, ջրերը վճիտ դարձրել, կանաչը աճել, բոյ
քաշել, մեծացել, ծաղիկները տեղ-տեղ թառամել,
տեղի տուել խոտերին ու հացաբոյսերին, օրը
տաքացել, երկարացել, գիւղացին ցանքսը վեր-
ջացրել, լծկան մալը արօտ թողել, գառները
պարարտացել, դմբոջը կացել, հորթերը հօտ կազ-
մել, գաշա դուրս եկել, իսկ հաւերը իրենց հաւ-
կըթներից նոր դուրս եկած ձագերը ետևները
ձգել, աջ ու ձախ տարածուել, դուռ ու երթիկ
բռնել. զրանց մէջ կային և Օսկին-ապլայի երկու
թուխսը, որոնք նոյնպէս իրենց ձագերը չորս
կողմերը փռած ման էին գալիս, սակայն նա ան-

տարբեր չէր կարողանում նայել այնքան կրթ-
կրթացող հաւին ու ճուտին, թխտին ու ձագին,
քանի որ իր Թուշիկը նրանց մէջ չկար:

Թուշիկը, Թուշիկը, Օսկին-ապլայի աչքի լոյս
Թուշիկը:

Իրացի կանայք, որ շատ անգամ տեսնում
էին Օսկին-ապլային Թուշիկի համար տրորուելիս
ու միտք անելիս՝ ասում էին.

— Դէ, հերիք եղաւ, Օսկին-ապլա, հերիք,
հէջ բան որ չէ՝ մեղք է, մի հաւն ի՞նչ է, որ
առել-անցել ես. ամօթ է անգամ:

— Աղջի Փամբուզ, գիտեմ, գիտեմ. գիտես
թէ չեմ հասկընայ, հալբաթ որ մեղք է, համա
ի՞նչ անեմ, որ չեմ կարող, չեմ. կըսես թէ մի
ազիզ բան ձեռքէս գնացած ըլի — զըրացուն պա-
տասխանում էր Օսկին-ապլան և տխրամած յի-
շում Թուշիկին:

Այդ օրը չարուադարը նորից եկել էր ձու
առնելու:

Օսկին-ապլան սնդկից հանեց պահած ձուերը,
բերեց ծախելու:

Չարուադարը թարսի պէս կանգնեց և պա-
հանջեց Թուշիկի ձուերը, այլապէս սպառնում
էր ոչ մի ձու չառնել:

Օսկին-ապլան մրմուռը սրտում յայտնեց, որ
Թուշիկը չկայ, կորել է:

Չարուադարը չհաւատաց նրա ասածին.
— Սուտ մի խօսի, պառաւ, ինձի չէս կարայ

խաբէ. ո՞ւր են ճերմակ, խոշոր հաւկթները, բեր
մէյդան:

— Աստուած վկայ սուտ չեմ խօսի. Թուշիկը
կորաւ. գեղի չափխուն աղէքը բռնեցին, կերան:

— Որ երկինք ելնիս՝ չեմ հաւատայ:
— Է՛, չես հաւատայ, դո՛ւ գիտես — սրտա-
կոտոր, բայց զայրացած ասաց Օսկին-ապլան, և
գոգի ձուերը տարաւ ներս:

Չարուադարը անփոյթ հեռացաւ, մանաւանդ
որ ձուի առատ ժամանակն էր և մանր ձու որ-
տեղ ասես կ'ճարէր:

Օսկին-ապլայի դարգը կրկնապատկուեց. նա
այդ ժամանակ լիովին զգաց, թէ ինչ մեծ նշա-
նակութիւն է ունեցել նրա համար Թուշիկը, որ-
քան մեծ է եղել նրա կորուստը. աչքերի ար-
տասուքը սրբեց, դառը անէծք կարգաց գողացողի
գլխին, մտաւ ներս, ընկաւ թախթի վրայ և սկսեց
երեխայի պէս հեկեկալ, լաց լինել:

— Մամի ջան, ի՞նչ է եղել, ինչի՞ համար
կուլաս:

— Հէջ, ձագս, ի՞նչի պիտի լամ. Աստուած
լալու կարօտ չանէ: Գնացէք, գնացէք դուրս
խաղացէք — թէև իրեն զսպած հանգստացնում էր
Օսկին-ապլան, սակայն արտասուքը հեղեղի նման
վազում էր նրա աչքերից:

— Մամի ջան, մի լայ, թէ չէ մենք էլ լաց
կըլլինք — լալախառն ասաց պատիկից երկրորդ
թուր և սկսեց հեկեկալ:

—Վայ, ձագճուկս. քոռանամ ես, դճու ինչի կուլաս. դիւշմանդ թող լայ. հանգստացիր. զնա խաղալու. անա ձեզի ամեն մէկիդ մի-մի հաւկիթ, չկտորէք. ետև բերէք, կ'եփեմ, կ'ուտէք:

Թոռները առնում են տատի սուած ձուերը, կէս ուրախ, կէս տրտում ելնում են դուրս:

Օսկին-ապլան դարձեալ մնում է իր տեղում, և սկսում այս անգամ մտածել իր մանր-մտեղ թոռների մասին. նա մտածում է, որ նրանց ոտքերը բոբիկ են, մարմիններին հագուստ չկայ, գլուխները բաց... այդ ամենից գատ՝ ամբարում ալիւրի փոշի չկայ, վաղը էլի զնալու է մուրալու... ու նորից ընկնում է դառն խոհերի մէջ, որ իր օրերն արդէն համրած են, էսօր-էգուց հոգին տալու է Աստծուն, իսկ ի՞նչ է լինելու թոռների դրութիւնը, ո՞վ է նրանց պահելու-պահպանելու, տէր ու տիրական դառնալու:

«Ա՛խ, Աստուած ջան, Քեզի ի՞նչ էի արել, որ ջիւան տղէս ու ջէյրան հարսս եկար գլխուս գարկիր, տարար, ինձի թողիր էսպէս անտէր-անտիրական, դռնէդուռ ընկած, մուրալով-կուրալով: Հալա ես ոչի՞նչ, էս է, ամանաթս տալու եմ Քեզի, ի՞նչ պիտի ըլլի էն անմեղ անասունների հալը... արտերս ձեռքէս խլեցին, չայիրս Մեղքոն աղէն գաւթեց, մալերս՝ որը սատկան, որը ծախուան, մնացին մի-երկու թև հաւս, էն էլ թուշիկս կորաւ. գրողի տարած չարուազարն էլ թուշիկի հաւկիթները մահանայ բռնեց, հաւ-

կիթներս չառաւ. ի՞նչ էնեմ», մրմուաց քթի տակ նա և իրեն մաշող ծանր մտքերից թուլացած ընկաւ մօտը դրած բարձին ու սկսեց կամաց-կամաց նիրհել, մրափել:

Օրն արդէն կէս օր անցել էր. թոնրատան հաւերը իրենց կըլլա-կըլլակոցը վաղուց վերջացրել էին. երթկից ներս ընկնող արևը խաղում էր տան նոր ջրջկնած հողէ յատակի հետ. չորս կողմը տիրում էր կատարեալ լուութիւն. այդ լուութեան մէջ հանգիստ և խաղաղ ննջում էր Օսկին-ապլան, և նորից երազի մէջ տեսնում էր Թուշիկին. բայց այս անգամ նա ոչ միայն տեսնում է, այլ և լսում է նրա ձայնը, այն էլ ոչ թէ կըլլա-կըլլա, այլ կըռթ-կըռթ. նա չի հաւատում իր տեսած երազին ու լսուող ձայնին, կարծելով որ նորից սուտ է, նորից պատրանք է, մի ծանր ոգոց է քաշում ու նորից աշխատում քնել. սակայն ձայնը շարունակում է, կըռթ-կըռթոցը շատանում. կըռթ-կըռթոցին հետևում է ճիւ-ճիւ-ճիւ... Նա սթափում է, վեր է թռչում քնած տեղից, տրորում է բժժած աչքերը, նայում է չորս կողմը, դէպի բակը, այնտեղ տեսնում է, այժմ դատարկ, ցորենի փոքր ամբարի տակ, ջրի գուր մօտ մի ուռած, բամբակի նման ճիւղ-ճերմակ բան. նա նորից սրբում է աչքերը և տեսնում է ի՞նչ.—

Թուշիկը. նրա ետևից մի խումբ ձագ ամբարի տակից դուրս գալիս:

Օսկին-ապլան ուրախութիւնից ինքն իրեն

կորցրած չի հաւատում իր աչքի տեսածին, ինքնաշփոթութեան մէջ նա մի սուր ճիշ է արձակում և վազում դրացունու մօտ նրան կանչելու, ցոյց տալու աչքին երեցածը, հարցնելու-իմանալու, արդեօք ճիշտ է, արդեօք տեսիլք չէ:

Գալիս է դրացունին, տեսնում է իրանկանութիւնը, հաստատում եւ բացատրում, որ թուշիկը նախ իր ձուերը ածել է ամբարի տակ, ապա թուխս նստել, ներքև թափուած հատիկներով կերակրուել, ամբարի մօտի ջրի գոլից թափուած կաթիլներից խմել, յետոյ երբ ձագեր է հանել՝ ձագերն առել դուրս եկել:

Օսկին-ապլան ուրախ-ուրախ վազում է փոխընձի կարասին, գտնում է նրա յատակին մի բուռ փոխինձ, հանում այն, ջրով շաղախում, փշրանք անում, ձագերին կերակուր պատրաստում, ապա փռելով նրանց առաջ կանչում.

— Ձիգ-ձիգ-ձիգ...

Ու կանգնած տեղում մնացած՝ երկար-երկար սկսում է նայել մէկ թուշիկին, մէկ նոր ելած ձագերին, որ մօր պէս սիրուն էին, մօր պէս սպիտակ:

Բ Ո Ղ Ա Ր Ը

I.

Նրանք— հովիւ Մինասն ու գամբռ Բողարը — իրար մօտիկ ընկերներ էին, երկար տարիների անբաժան ընկերներ:

Այն օրից, երբ Մինասը կորցրեց իր կարողութեան վերջին մնացորդը և գիւղում դառաւ ոչխարի հովիւ՝ նոյն օրից էլ Բողարը սոք կոխեց նրա առնը:

Այն ժամանակ Բողարը փոքր, կոլոր մարմնով, կարճիկ հաստ ոտներով, սև դնչով մի շագանակագոյն քոթոթ էր, որ պոչը հազիւ վեր բարձրացնելով գնդու-մնդու գնում էր այս ու այն կողմ, դունչը կոխում էր ամեն տեղ, ուր տեսնում էր մի հեղուկ, փոքրիկ, կարմիր լեզուն հանում ու լակել սկսում:

Մինասի տան մէջ Բողարին ամենից շատ սիրողը կամ, ճիշտն ասած՝ շարչարողը Մինասի մեծ որդի Սիմիկն էր, որ շարունակ նրան գրկած իր հետ ման էր ածում, յաճախ և գրկից վայր գցում, նրան կաղկանձելու պատճառ դառնում: Սիմիկը շատ անգամ բռնում էր Բողարի առաջին թաթիկներից, նրան ետի ոտքերի վրայ նստել սովորեցնում, բայց իզո՛ւր, Բողարի հաստ մարմինը կշռում էր մի կողմ, և նա կորցնելով իր հաւասարակշռութիւնը՝ ընկնում էր վայր:

+ 2 . 4 .

10717-57



Սակայն Միմիկը Բողարին այդ կերպ որքան շարժարում էր, այնքան էլ նրան խնամում, պահպանում էր. նա մօրիցը ծածուկ կաթ էր տալիս Բողարին լակելու, հացի փշրանքներ էր բերանը դնում, հետը խաղում, գիւղի մէջ ման ածում:

Միմիկը իրեն կատարեալ տէր ու տիրական էր համարում Բողարին: Այդ բանը սաստիկ վրշտացնում, նոյն իսկ բարկացնում էր Մինասի միւս գաւակներին. նրանք յաճախ բողոքում էին.

— Ի՞նչ ամբողջ օրը Բողարն առել ես, հետը կը խաղաս. քիչ էլ մեզ տուր, մենք հետը խաղանք:

— Չեմ տայ — բացականչում էր Միմիկը, — քեռանցս տանից ես չեմ բերել. իմ շունս է —, ու ամուր խտտում էր Բողարին:

— Հայրիկ, Միմիկը Բողարը իսկի մեզ չի տայ խաղալու — բողոքում էին հօրը Միմիկի մեծ քոյրն ու եղբայրները:

— Տէր Աստուած, շանը ձեռքը կրակն ենք ընկել. ամբողջ օրը կռիւ է —, նկատում էր Մինասը և չէր միջամտում նրանց կռուին:

— Կռիւ ասիր ու պրծանք. երէկ էլ էդ բէմուրագ Սառան ու չռչակած Միմիկը իրար մագեր քաշեցին, իրար երես ճանկուտեցին. ես էլ հեռսիցս երկուսին էլ մի լաւ ծեծեցի ու էնպէս բաժանեցի, շունն էլ առայ մինչի դուռը շարտեցի, էլի սաղ մնաց. չգիտեմ որտեղից բերիք էդ անտէրը —, տհաճութեամբ յարում էր Մինասի

երկրորդ կինը, որ նրա որդոց խորթ մայրն էր և որին իր անհամբոյր ու խստասիրտ բնաւորութեան համար գիւղում անուանել էին խելառ Օսան:

— Ոչինչ. մի-երկու ամսից կը մեծանայ, շուն կը դառնայ. հետս կառնիմ ոչխարը կը տանիմ, այլ ևս կռիւ չի լինի —, մեղմութեամբ վրայ էր բերում Մինասը և աւելացնում. — Բողարը առաջին աներանցս՝ Մկոյենց շների ցեղից է, ազգուն շուն կըլլի:

— Ինչպէս որ առաջին աներանքդ՝ Մկոյենք իրենք են ազգուն՝ էնպէս էլ իրենց շները. անտէր մնան գլխներուն. երէկ դռնից անց կացայ, վրայ տուին, քիչ մնաց պատուէին —, նորից վրայ էր բերում խելառ-Օսանը և ոտի հարուածով Բողարին դէն շարտում, երբ նկատում էր, որ Միմիկը դարձեալ իրենից թաքուն կաթ էր տուել նրան ուտելու:

Բողարը այդ, յաճախակի կրկնուող, հարուածից միջանի անգամ կողկանձիւն էր արձակում, ապա նորից մօտենում կաթի փոսիկին, լակում:

Բայց Բողարը երբէք այնպիսի ծանր ցաւ չէր զգացել, ինչպէս զգաց նա մի օր, երբ նրա ականջները կտրեցին. կասես այրեցին նրա ականջները այն փայլուն բանով, որ Միմիկի հայրը ունէր ձեռում բռնած. Բողարը մի սուր ցաւ զգաց, մի այրող կակիծ, երբ մէկ էլ նկատեց, որ իր երկու թշերի հետ կախուած երկար ական-

ջները այլ ևս չկային, դրա փոխարէն մի տաք հեղուկ ծածկեց նրա ականջներին ներքևի մասերը: Բողարը չգիմանալով կսկծին՝ գժուածի նման փախաւ, մտաւ գոմի մի անկիւնը, ատելով թէ իր ականջները կտրող մարդուն և թէ Միմիկին, որ կտրելու ժամանակ իր գլուխը պինդ բռնել էր, քաշուեց անկիւնի խորքը, հաստիկ թաթիկներով տրորելով ցաւած ականջները սկսեց լալ-լալ, մինչև որ քունը տարաւ, քնեց...

II.

Բայց այժմ այն չէր Բողարը, ինչ սրանից 8—9 տարի առաջ. այժմ նա հազիւ կարողանում էր ոտի կանգնել, ոտքերը շարժել, պոչը բարձրացնել. իսկ երբ նա փորձում էր հաջել՝ խռպոտ ձայնը նրան դաւաճանում էր, մինչև իսկ ծիծաղելի դարձնում. ապա թափուած ատամները... Ծերացել, սաստիկ ծերացել էր Բողարը. միակ գեղեցկութիւնը, որ մնացել էր նրա վրայ, դա նրա հսկայ արտաքինն էր՝ մեծ առիւծանման գլխով, հաստ, բաշի ձևով մազերով ծածկուած վզով և փառահեղ սև դնչով:

Բողարը ամենևին Մինասի դռնից չէր հեռանում. նա կամ մի արեգակոտ տեղ փռւում էր ամբողջ մարմնով, իր վերջաւորութիւնները պարզում, տաքանում, կամ՝ երեսը դէպի Մինասի թոնրատունն ուղղած անթարթ ներս նայում, որ կանչէին, մի բան տային ուտելու: Սակայն

այդ չկար: Եւ երբ նա երկար սպասելուց յոյսը կտրում էր՝ մտնում էր ներս, այնտեղ, թոնրատանը գետնի երեսին ընկած փշրանքները մէկ-մէկ հաւաքում, ուտում:

— Օ՛շտ, գրողը երեսը, էլի գէշ բոշի պէս եկաւ ներս—, աղաղակում էր Մինասի կինը, խելառ-Օսանը ու ձեռի ակիշով հարուածում նրան:

Բողարը մի ցաւոտ կաղկանձիւն էր արձակում, թոնրատանից ելնում դուրս, քիչ հեռուն կանգնում, դարձեալ դէմքը դէպի թոնրատուն ուղղում և անթարթ այն կողմը նայում:

— Քա մարդ՛, սէրը Քրիստոսին, մինչև երբ էդ մոռոտառը սաղ թողնիս—, բորբոքուած դառնում էր խելառ-Օսանը ամուսնուն, —տար հրացանով զարկ, կամ, հիմա ձմեռ է, տար գիւղից դուրս, գիշերը մի քարից կապիր, գէլերը գան տանեն, վերջանայ:

Մինասը տեսձ սրտով լսում էր կնոջ խօսքերը և մտածմունքների մէջ ընկնում:

— Հա, էլ ի՞նչ միտք կանես. ախար ինչո՞ւ է պէտք էդ անտէրը, որ պահել ես:

— Ոչինչ, էնպէս մտքի ընկայ—, իր սրտի, երկար տարիների կատակուած, գայրոյթը զսպելով վրայ էր բերում Մինասը և մտքով սլանում 7—8 տարի առաջ, երբ ինքը երկար տարիներով ոչխարի հովիւ էր, դաշտում Բողարի հետ միասին անց էր կացնում իր կեանքը, երբ Բողարը պոչը մէջքին գարկած, ինչպէս մի առիւծ, պտոյտ էր գործում

հօտի շուրջը, հսկում ինչպէս մի նուիրուած ընկեր, որ ոչ ոք հօտին չմօտենար և ոչ մի ոչխար հօտից չհեռանար... Յիշում էր, թէ ինչպէս ինքը— Մինասը— գիշերները փափուկ խոտերի մէջ պառկում էր քնելու, իսկ Բողարը քունը կտրած, զինուած պահպանի նման պոռոյաներ էր գործում հօտի շուրջը, պահպանում նրան, և երբ լուսադէմին նա— Մինասը— դարթնում էր, աչքերը տրորում ու նայում տեղից նոր վեր կացող, դէպի արօտը շարժուող հօտին՝ այդ ժամանակ Բողարն իսկոյն վազում էր մօտ, Մինասի առջև մի քանի անգամ առաջի ոտքերի վրայ պառկում, զլուխ խոնարհում, տեղեկութիւն տալիս, որ ամեն ինչ ապահով է, ապա դարձեալ պոչը մէջքին դարկում, իր գործին գնում... Բայց ամենից լաւ Մինասը յիշում էր այն չարաբաղդ օրը, երբ մի անգամ աւազակները յարձակուեցին հօտի վրայ, ուղեցին դարկել-տանել: Մինասը հօտի առաջ կանգնած՝ չէր թողնում, որ աւազակները ոչխարը քշէին-տանէին. նա մահակը բարձրացրած հօտը ետ էր քշում. աւազակները նրա ետևից ընկած հարուածում էին նրան և սպանում սպանել, եթէ չհեռանար հօտի առաջից. Բողարն այդ ժամանակ ինչպէս մի կատաղի վագր մէկ մէկի շորերն էր պատառոտում, մէկ միւսին կծոտում: աւազակները տեսնելով, որ Մինասը հօտի առջևից չի հեռանում՝ վայր գցեցին նրան և այն է ուզում էին սրի բերան տալ (նրանք հրաջան

չէին արձակում, որ ձայնը գիւղ չգնար), որ Բողարը հասաւ տիրոջը օգնութեան. նա թուստը բարձրացնող աւազակի վրայ, բռեց նրա վզակովից. աւազակը ուժասպառ վայր ընկաւ. նրա ընկեր միւս աւազակը թողեց Մինասին, հասաւ շանը, սուրը պտտեցրեց օդում և, որքան թափ ունէր, իջեցրեց Բողարի մէջքին, ուսախառն. Մինասը այդ վայրկենին փախաւ, իր կեանքն ազատեց, և մի հարիւր քայլից երբ ետ նայեց, տեսաւ, թէ ինչպէս կենդանին անագին վէրքն ուսին, արիւնի մէջ ներկուած վագելով հասաւ իրեն, մի ցաւագար մոռենչ արձակեց, փռուեց նրա ոտքերի առաջ ու սկսեց իր կաղկանձիւնն աւելի զօրեղ, աւելի սրաալի դարձնել, որով կածես ասում էր. «Նայ հաւա՛ր, հասէ՛ք, օգնեցէ՛ք. հօտը դարկին, տարան»...

Այդ ձայնի վրայ մօտիկ եգնարածները հասան, իմացան բանի էութիւնը, իմաց տուին գիւղին, որից յետոյ գիւղացիները որը ոտով, որը ձիով, որը բրով, որը սրով վրայ տուին, փախցրած հօտը աւազակների ձեռքից ետ խլեցին:

Կտրիճների ոչխարի հօտը փրկելը երկար յիշուեց գիւղում, երկար յիշուեց և Մինասի անձնանուէր պաշտպանութիւնը, բայց այնքան երկար չյիշուեց Բողարի կատարած հերոսութիւնն ու վիրաւորուելը, որի էութիւնը միայն Մինասը գիտէր. և երբէք-երբէք Մինասի մտքից չէր հեռանում այն չարագուշակ ըոպէն, երբ աւազակի

սուրը շողշողաց իր գլխին, ու այն է՝ հարուածը պիտի գար, եթէ Բողարը չհասնէր օգնութեան. նա աւագակի վզակոթից բռնեց, նրան ներքև գլորեց, որից ինքը—Մինասը—հնարաւորութիւն ստացած՝ փախաւ, իր կեանքն ազատեց... Մինչդեռ Բողարը այդ անելու համար ստացաւ ծանր, մահացու վէրք և եկաւ փռուեց իր ոտքերի առաջ ու սկսեց լալ... Այդ ըոպէն Մինասն ամենեկին չէր կարողանում մոռանալ. մինչդեռ հիմա նրա կիներ՝ խելառ-Օսանը պահանջում էր, որ նա Բողարին տանէր կամ հրացանագարկ անէր և կամ գայլերի ատամներին բաժին դարձնէր...

«Ինչպէս, ինչպէս ես իմ կեանքը փրկողին տանիմ իր կեանքից զրկեմ», այրուած սրտով ինքն իրեն խօսում էր նա և ցածր, զսպած հառաջ արձակուով:

— Տար, ի սէր Աստծո՛ւ, տար էդ անտէրը. էսօր էլ դունչը կոխել է թանի կճուճը, էնքան թանը մուռաբուել. էս մի շաբաթը մնալու ենք առանց թանապրի:

«Ի հարկէ, քաղցած որ մնայ, գլուխը թանի մէջ էլ կը կոխէ ու մածնի մէջ էլ», ուզում էր կնոջը պատասխանել Մինասը, սակայն կռուի տեղիք չտալու համար լուռ մնաց:

— Ակտին առայ, գլխին զարկի թէ սատկի՝ էլի չսատկաւ. ախար ի՞նչի է պէտք էդ մուռտառը, որ սաղ ես թողել:

Այդ ըոպէ Մինասը թոնրատանից դուրս

նայեց և տեսաւ, թէ ինչպէս կենդանին ծանր հարուածից գլուխը մի կողմ ծռած սաստիկ բարձր կաղկանձում էր և բրդոտ բաշը ցնցում, որի վրայ ափօսած և ձգուած էր նրա սպին:

Բողարը մի խղճալի հայեացք ձգեց Մինասի երեսին, կասես գանգատուեց, որ իրեն էլի ծեծել են նորից գլուխը կախեց և կաղկանձիւնը շարունակեց:

— Թող մէկ էլ էդ անտէրը թոնրատուն մանի՛ տես, ես էս կացնով կը տամ գլխին, կը սատկեցնեմ, թէ չէ. սպասիր դո՛ւ. դու գրան սաղ թող:

— Լաւ, Աստուածդ կը սիրես, էլ մի նեղանայ. գիշերս կը տանիմ մեր խոտնոցի պատից կը կապեմ, թող գէլերը գան տանին, վերջանայ—,կնոջ խօսքը սրտնեղած կտրեց Մինասը:

— Էլ ի՞նչ գիշեր. տանող ես՝ հիմա տար:

— Լաւ լաւ, հիմա կը տանիմ, էլ մի երկարացնէ—, խօսեց Մինասը և առնելով հորթի կապը անցկացրեց Բողարի վիզը, տարաւ գիւղից դուրս, ուր փոխանակ իր խոտնոցի պատի քարերից կապելու՝ գիւղի մօտի մի փարախի պատից կապեց և ինքն իրեն խօսեց. «Թէ Բողարի ճակատին զրած է, որ գայլերն են նրան պատառոտելու՝ գայլերը նրան այստեղ էլ կը գտնեն». ասաց և հրաժեշտի ողջոյն ուզեց տալ. այդ ժամանակ նա նայեց կենդանու աչքերին, ուզեց նրան ասել՝ Բողար ջան, մնաւ բարով, մենք այլ ևս իրար տեսնելու չենք. բայց երբ յիշեց այն վայրկեանը,

որ Բողարը գայլերի ժանիքներով պատառոտուելու է՝ անկարող եղաւ մի բառ անգամ ասելու, բռնեց կենդանու գլուխը, դունչը, փարեց ու խփոյն արագ քայլելով հեռացաւ... փախաւ... Բողարն ուզեց նրա ետեւից գնալ, բայց վզի կապը խանգարեց նրան. այդ ընդէ նա հարցական կերպով նայեց տիրոջ ետեւից և սկսեց կապը ձգել. բայց իզո՛ւր, ամուր կապուած էր. նա կասես հասկացաւ, որ իրեն գէն են շարտում, մի ողբագին կողկանձիւն արձակեց տիրոջ ետեւից: Այդ ողբի կողկանձիւնը անցաւ Մինասի սրտի էն խորքերը և մրմնացնել տուեց. մի ընդէ Մինասը պատրաստուեց ետ դառնալ, Բողարի վզի կապն արձակել, բայց երբ մտաբերեց խելատ Օսանի կատարի կռիւները, Բողարին ամեն օր անողորմ թակելը՝ ետ չդարձաւ, այլ մի քանի անգամ շուռ եկաւ դէպի նրա կողմը, նայեց նրա երեսին ու ծռուելով պատի անկիւնը գնաց տուն. բայց շարունակ նրա աչքի առաջն էր Բողարի այն նայուածքը, որ պատի անկիւնից վերջին անգամ ուղղեց տիրոջ երեսին և լացը շատացրեց:

— Տարար կապեցիր:

— Այո՛, կապեցի:

— Փնօք քեզ, Աստուած, հազիւ ազատանք էդ անտէրից —, դո՛ս սրտով խօսեց Օսանը:

Օրը մթնեց. գիշերը վրայ հասաւ. բոլորը պառկեցին քնելու. պառկեց քնելու և Մինասը.

սակայն նրա աչքերին քունը մօտ չէր գալիս. շարունակ նրա առաջ էր այն պատկերը, որ անհետուից ականջները սրած, պոչերը դիք բռնած, ատամները ցոյց տալով դէպի Բողարն են գալիս ծաղկակոխները. Բողարն ուզում է փախչել, բայց վզի կապն արգելում է նրան. Բողարն անգօր է պաշտպանուելու, կծելու անգամ ատամ չունի բերանում. անա ծաղկակոխները յարձակում են գործում նրա վրայ, տակներն են զցում, խեղդոտում... Բողարն այդ ընդէ յիշում է իր տիրոջը՝ Մինասին, դուցէ և կանչում է նրան իրեն օգնութեան, բայց իզո՛ւր. Մինասը, նրա սիրական տէրը, պահապան ձեռքը չկայ. Բողարն անձնատուր է լինում գայլերի ատամներին և վերջին շունչը նրանց ոտքերի տակ փչում... գայլերը պատառ-պատառ են անում նրան, ապա նստում ուտում... և էլի մի-երկու ընդէ՝ Բողարի հետքն անգամ չի մնում, բացի նրա երկար մագերից, որ ձիւնի երեսին են փռում, և հորթի դատարկ կապից...

— ՕՖՓ —, ձեռը այրուող ճակատին տանելով ծանր հառաչ է քաշում Մինասը և տեղաշորի մէջ շուռումուռ գալիս:

— Ի՞նչ ես քունդ կորցրել, չես թողնի, որ մարդ հանգիստ պառկի —, քնից զարթնելով դժգո՛հ նկատում է Մինասի կրնը, Օսանը:

— Ոչինչ, էնպէս:

— Ի՛է, հանգիստ քնիր. կէսգիշեր եղաւ, հերիք կողքէ-կողք գառնաս:

—Այն, կէսգիշեր եղաւ—,կրկնում է Մինասը և մտքում շարունակում. «անտէր ծաղկակոխներն էլ հէնց կէս գիշերին են գալիս», ու նորից ընկնում է ծանր ու ճնշող մտապատկերների մէջ:

Վերջապէս լուսանում է:

Օսանը քնից զարթնելու պէս առաջին պահանջն այն է անում, որ Մինասը գնայ հորթի կապը բերէ, քանի մարդ չէ գնացել այն կողմերը, կապը չէ տարել:

—Լաւ —, ձայնում է Մինասը և մոլար քայլերն ուղղում դէպի այն կողմը, ուր Բողարն է կապուած. գնում է ինչպէս կաթուածահար, մտապատկերելով այն ծանր բոսայէն, որ անհաստեղալու է փարախին, տեսնելու է հորթի դատարկ կապը և... Բողարի բրդերը... Նա թուլացած ոտներով մօտ է գնում փարախին, ճնշուած սրբտով նայում Բողարի կապուած տեղը, և ի՞նչ է տեսնում... Բողարն անփաս կանգնած է իր տեղում: Զարմանքից, ևս առաւել ուրախութիւնից թնդում է Մինասի սիրտը. նա խելագարի նման մօտ է վազում կենդանուն, շփում է նրա բաշն ու գլուխը. Բողարն իր կողմից սկսում է կարօտով լիզել Մինասի ձեռքերը, փաթաթուել նրա ոտքերը, կողկանձել, ապա աղերսական հայեացքով նայել տիրոջ երեսին, աչքերին ու իր սոված, սառած դուրթիւնից գանգատուել: Մինասն այդ եղելութեան առաջ անկարող է լինում իրեն

գտպել, արձակում է Բողարի վզի կապը, բերում տուն հաց տալու նրան:

Նոր էր Մինասը տուն հասել, սակառից մերկու կտոր հաց առել, դուրս եկել, որ յանկարծ նրա հանդէպ ելաւ խելառ Օսանը:

— Էդ անտէրը կենդանի է մնացել, գէլերը չէ՞ն պատառօտել, որ բերել ես, հաց ես տալիս, հա՞ —, աղաղակեց նա և մի ծանր հարուած իջցրեց Բողարի մէջքին:

Բողարն այդ ուժգին հարուածից սաստիկ բարձր աղաղակ բարձրացրեց, քաշուեց բակի մի անկիւնը ու սկսեց լալ:

Այդ տեսարանը կայծակի նման շանթեց Մինասին. նա մտածեց. «ի՞նչ անեմ, կռուեմ առանց այն էլ կռուարար կնոջս հետ, որ երախտաւոր կենդանուն ամեն օր այդպէս անազոռոյն տանջում է, թէ՛ լուեմ, ինչպէս մինչև այժմ լուել եմ. եթէ կռուեմ՝ նա իր կիրքն ու բարկութիւնը դարձեալ խեղճ որբուկներիս գլխին է թափելու, իսկ եթէ չկռուեմ՝ ախար անտանելի է նրա դաժան վարմունքը դէպի Բողարը. ի՞նչ անեմ»... Մտածեց-մտածեց և պարզ տեսաւ, որ Բողարի կեանքը կեանք չէր. աւելի լաւ էր, որ նա մեռնէր, քան կենդանի մնար ու այդ կերպ շարունակ տանջուէր... մտածեց, և քայլերն ուղղեց դէպի հարևանի տուն:

Քիչ յետոյ եկաւ այնտեղից հրացանը և մերկու փամփուշտ ձեռին. Բողարին կանչեց դուրս:

Բողարն իր սիրելի տիրոջ ձայնը լսելու պէս
գող-գող քայլերով ելաւ գուրս:

Մինասը Բողարին թողեց պատի ներքևում,
ինքը միքանի ոտ սանդուխքներով բարձրացաւ
վերև և հրացանի փողն ուղղեց դէպի Բողարը,
դէպի այն սպին, որ նա ստացել էր սրանից մի-
քանի տարի առաջ իր տիրոջ կեանքը փրկելու
համար: Հրացանը պայթեց, ծուխը ծածկեց Բո-
ղարի մարմինը, և նրա սպիի մի կողմի մագերը
հրացանի բոցից խանձուեցին: Բողարը մի սուր
ծակոց զգաց կրժքում, ուշաթափուեց, մի ողբալի
վայնասուն արձակեց և սկսեց նայել չորս կողմը.
այդ բոպէ նա նկատեց, որ քիչ առաջ իր աչ-
քից անհետացող տէրը—Մինասը—կանգնել էր
սանդուխքի գլխին. Բողարը գող-գող քայլերն ուղ-
ղեց դէպի նա՝ նրա մօտ գտնելու իր փրկութիւ-
նը, բարձրացաւ վերև, մի ցաւալի մոռնչ ար-
ձակեց և փռուեց Մինասի ոտքերի առաջ. փռուեց
այնպէս, ինչպէս տարիներ առաջ փռուել էր նա
աւազակներին վերք ստացած իր տիրոջ կեանքը
փրկելու համար. փռուեց և այնտեղ էլ փչեց իր
վերջին շունչը...

Մինասը իր ցաւոտ կսկիծի հետ էր, որ նկա-
տեց իր կնոջը, խելառ-Օսանին դէպի վերջին
ցնցումներն արձակող կենդանին գալիս:

—Օ՛խ, սատկաւ էդ անտէրը:

—Հա՛, սատկաւ—, մեքենայաբար կրկնեց Մի-
նասն ու ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս գրպա-

նում մնացած միւս փամփուշտը զրեց հրացանի
մէջ, թէ ինչպէս հրացանի փողն ուղղեց դէպի
խելառ-Օսանը, թէ ինչպէս հրացանը պայթեց,
միայն այն տեսաւ, որ կանացի մի սաստիկ սուր
ձիչ բարձրացաւ և իր ամուսնու մարմինը գլո-
րուեց ցած, ընկաւ Բողարի դիակի վրայ:

ՀՕՐԵՂԲԱՅՐՍ

I.

Ամեն տարի, երբ գարունը վրայ էր հասնում՝ հօրեղբօրս կնոջ ուրախութեանը չափ ու սահման չկար, որ նրա հաւերը նորից ձու էին ածելու, թուխս էին նստելու, ձագ էին հանելու, և նա այդ նորելուկ ձագերն իր խնամքի տակ էր առնելու: Նա սարքում էր թխսերի բները, խոշոր, սիրուն, լաւ հաւերի հաւկթները ջուկում, դնում էր նրանց տակ, ապա գիշեր-ցերեկ հետևում էր նրանց տակ, ապա գիշեր-ցերեկ հետևում էր, որ նրանք տակերի ձուերը մի կողմ չգլորէին, առանց վնասի ձագ հանէին: Եւ երբ դուրս էին գալիս դեղնախառն, խատուտիկ, սևլիկ, սիրուն ձագերը՝ հօրեղբօրս կինն առնում էր նրանց իր գոգի մէջ, բերում թոնրատուն, դնում մաղի մէջ, որի յատակին առաջուց փափուկ բուրդ էր լինում ածած, ապա վերցնում շաղախած փոխինձը, փռում նրանց առաջ, ձիգ-ձիգ անելով կերակրում ու հիացմունքով նայում կենդանական այդ նոր աշխարհին: Սակայն, երբ մեծանում էին այդ ձագերը, տանից դուրս էին գալիս, իրենց մօրերու հետ փռում էին դուռ ու երթիկ՝ հօրեղբօրս կնոջ ուրախութիւնը փոխւում էր տխրութեան: Հօրեղբայրս նկատում էր նրա տխրութիւնը և հարցնում.

— Էլի ինչի՞ ես տխրել, կնիկ:

— Հէջ, ինչի՞ պիտի տխրիմ — աշխատում էր տխրութիւնը ծածկել նա:

— Թէ որ տխուր չես, հապա ինչի՞ համար ես քիթդ կախել:

— Ի՛նչ պիտի ըլի — վերջապէս բացւում էր հօրեղբօրս կինը — ,էսօր երկու թուխսս իրենց ձագերով տանից դուրս հանեցի, բայց գիտեմ, որ գրողի տարած գիւղի չափխուն տղէքը էլի բռնելու, ուտելու են. ես գիտեմ իմ ձագերս ուտողն ով է — ,շարունակում էր նա — ,գիտեմ, համա ինչ անեմ, որ մի նշան չեմ կարող բռնել, որ վրէն հաստատեմ, գնամ օձիքից բռնեմ, քաշեմ-բերեմ գիւղի մէջ, մի լաւ խայտառակեմ:

— Ո՞վ է — ,հանդարտ կերպով հարցնում էր հօրեղբայրս:

— Մեր գրացի Ալվանենց Աբէթը, ո՞վ:

— Ինչի՞ց գիտես, թէ նա է:

— Ես գիտեմ. սուրբ հոգիս կը վկայէ, որ նա է. կուզես երգում էլ կուտեմ — ,գլուխը շարժելով, յուզուած վրայ էր բերում հօրեղբօրս կինը — . իմ ձագերս ուր երթան՝ սաղ-սալամաթ ետ կուգան, բայց հէնց որ դէպի Ալվանենց կողմը կը ծռին՝ մէկ էլ տեսար մէկը չկայ:

Այդ միջոցին իմ գայրոյթս այն աստիճան սաստկանում էր, որ ես պատրաստ էի յարձակուել Աբէթի վրայ, բզիկ-բզիկ անել նրան:

— Է՛հ, կնիկմարդ, կը խօսիս էլի. ո՞վ գիտէ

Աբէթն է, թէ մի ուրիշը հիմա գիւղի բոլոր տղէքն են էգպէս:

Ես այդ ժամանակ մանուկ էի, տակաւին 7—8 տարեկան մանուկ:

II.

Այն, ինչի մասին որ մտածում էր հօրեղբօրս կինը և տխրում՝ կատարուեց. մէկ օր, երբ մեր, արդէն մեծացած, հաւի ձագերը գնացել էին դէպի Ալվանենց կողմերը՝ նրանց միջից անյայտացել էին կապոյտ չըթչըթիկ փիլիճն ու կարմիր փիմփիլի փիլիճը, որոնց երկուսին էլ հօրեղբօրս կինը միտք ունէր չծախելու, աքաղաղութեան համար պահելու. «չըթչըթիկը լաւ կռուան կըլլի, ուրիշ խորոզ մեր հաւերու մէջ չի թողնի, կարմիրն էլ՝ ձէնով, կանչան», շարունակ կրկնում էր նա. բայց այդ օրը, երբ նա շտեսաւ միւս ձագերի մէջ այդ երկու փիլիճը՝ բարկացաւ, ծնկներին զարկեց, յուզուեց, տխրեց, գանգատուեց հօրեղբօրս... բայց ինչ օգուտ, եղածն եղել էր:

Հօեղբայրս բարկութեամբ լցուած գնաց դէպի Ալվանենց գուռը, բայց ոչինչ չգտաւ, բացի մի հատիկ չըթչըթիկ փետուրից, որ ընկել էր նըրանց աղբանոցի մէջ: Մի փետուր. ինչ, միթէ՞ գրանով կարելի էր ապացուցանել, թէ Աբէթն էր կերել մեր փիլիճը. եթէ կերել էր՝ ապա ո՞ւր էին նրա ոտքերը, գլուխը, աղիքները. ո՞րտեղ էին միւս՝ կարմիր փիլիճի մասերը:

—Ո՛չ, ո՛չ. մի փետուրով չի կարելի մարդու վրայ յանցանք բարդել, ասել, թէ դու ես կերել—, եկաւ յայտնեց հօրեղբայրս:

—Ապա ո՞վ կերաւ, ասա, եթէ ոչ Աբէթը—, արտասուախառն կսկիծով վրայ բերեց հօրեղբօրս կինը, վշտալի հառաջ արձակեց և աչքերը քամեց— քոռանամ ես, իմ աղիզ փիլիճներս, քոռանամ, ձեզի մորթողի ձեռքը չօլխիր, բան չեմ ասէ:

Այդ հառաչն ու անէծքը, լացն ու արտասուքը ծակեցին իմ սիրտը, և ես ըսպէսպէս լցուեցի մի տեսակ վրէժի թոյնով. «ինչո՞ւ, ինչո՞ւ պէտք է ուրիշները մեր հաւի ձագերը բռնեն ուտեն, որ խեղճ հօրեղբօրս կինն էլ այգպէս տրորուի և աղի արտասուքներ թափէ, ինչո՞ւ. ես դրա վրէժը լուծելու եմ, անպատճառ լուծելու», որոճացի մտքումս...

III.

Օրերից մէկ օր, երեկոյեան դէմ փոքր քթոցը շալակած գնացի մեր մարագը ձիու համար յարդ բերելու: Մարագի գուռը նոր էի բացել ներս մտել, որ մի խումբ հաւի ձագեր իրենց մօր հետ ետևից թափուեցին ներս ու սկսեցին ձիւձիւնցով յարդը քջըջել:

Տակաւին այնքան չմեծացած ձագերը իրենց քանակով ու սիրուն տեսքով գրաւեցին իմ ուշու-

դրութիւնը. «այս սեմ ձագերն են. չլինի՞ Ալ-վանենց», շնչացի ես, ու միտքս փոխուեց. «ինչո՞ւ չանեմ, համ, քանի որ ուրիշները մեր ձագերը բռնում ուտում են»: Այդ մտածելու պէս վագեցի մարագի դուռը փակեցի, եկայ ետ:

Ձագերը դեռ միամիտ շարունակում էին իրենց քշուշը:

Ես յարձակուեցի իմ որսերի վրայ:

Ձագուկները իմ ձեռքից ազատուելու համար իրենց փոքրիկ, անգոր թևերը թափահարելով՝ սրտաճաք սկսեցին դէսուդէն վազել, մարին, թուխսը մարմինն ուռեցրած՝ մէկ իմ վրայ էր յարձակուում, մէկ դէպի իր յուսահատական ճիչ արձակող ձագերը վազում. սակայն իզո՞ւր. ես անյողթ էի դարձել. բռնեցի մէկին, ձեռով ձգելով կարեցի վիզը ու դեռ նրա մարմնի ցնցումները չվերջացած՝ կոխեցի յարդի տակ, բռնեցի միւսը, երրորդը, վերջապէս վեցերորդը, մինչև որ տեսայ ձագերի թիւն արդէն անօսրանում է, բաւ համարեցի. ապա մօտեցայ մարագի դռան, ձեռքից նայեցի դուրս. ոչ ոք չի երևում փողոցում. բացի դուռը, դարձայ ետ, շալակեցի յարդով լիքը քթոցը ու ձագերն իրենց մօր հետ դուրս անելով՝ քայլերս ուղղեցի դէպի մեր տուն:

Գնացի. սակայն ուշքս ու միտքս շարունակ իմ մօրթած, յարդի մէջ պահած հաւի ձագերն էին, որ հետևեալ առաւօտ, երբ հօրեղբայրս տանը չէր լինի, գնայի, բերէի, տայի հօրեղբօրս

կնոջը և ասէի. «այլ ևս լաց մի լինի. ես քո վրէժդ լուծեցի»:

Բայց սրտի ինչ որ անհանգստութիւնից, որ ինձ յայտնի չէր՝ երկիւղ էր թէ խղճի խայթոց, շուտ-շուտ բարձրանում էի մեր տան կտուրը, նայում դէպի մեր մարագի կողմը, թէ արդեօք դուռը պատահամբ բաց չէր մնացել, որևէ մէկը ներս չէր մտել, յարզը չէր խառնել ու մօրթած ձագերն այնտեղից չէր հանել ինձ խայտառակելու համար... օ-օ-օ, այդ հօ ինձ համար կատարեալ դժբաղդութիւն կը լինէր. յետոյ ի՞նչ էին ասելու ինձ ուրիշները. «գո՞ղ, հաւի ձագի գո՞ղ»... թերևս բռնէին, ծեծէին... «Ո՛հ, Տէր Աստուած, ի՛նչ դժուար բան է եղել գողութիւնը»:

Այդ տարուբերող, ինձ տանջող մտքերի մէջ էի, որ տեսայ մեր աղքատ հարևանի կնոջը, Սառա-սալլային դրացիների դռները ման գալիս:

— Աղջի Սառա, իրիկօրօք ի՛նչ ման կուգաս:

— Հաւի ձագերս կը փնտռեմ, Հիւսնի խանում, հաւի ձագերս:

— Չկան, ինչ է:

— Մինչի իրիկուն էս տեղերանքը ման կուգային, իրիկուայ դէմ գնացին դէպի վերի կալերը, նոր գնացի թէ բերեմ, տեսայ տասնութը ձագէն տասներկուսն է մնացել:

— Աղջի, էդ կորածի բան չէ. էդ բռնած

կերած կըլին. Աստծու կրակը անողի վրէ՛ն թափի. տեսնես ո՞ր գետինը մտածն է արել:

Հիւսնի խանութի այդ խօսքերը կարծես դէպի ինձ էին ուղղուած. «Աստծու կրակը վրէ՛ն թափի» բառերը կասես սիրտս ծակեցին. ծանր յուզմունքից քիչ մնաց ճշայի, սակայն երևակայելով գալիք խայտառակութիւնը՝ տիրապետեցի ինձ և այնպէս խրոխտ կանգնեցի տեղումս, որ կասես իսկի բանից խաբար չլինէի, և Հիւսնի խանութի խօսքերը ինձ վերաբերում չլինէին:

Հիւսնի խանութը մտաւ ներս:

Սառա-ապլան իր քայլերն ուղղեց դէպի միւս հարևանների դռները: Սակայն իզուր. ձագերը չկային ու չկային:

Սյլես կասկած չկար, որ իմ մորթած հաւի ձագերը Սառա-ապլայինն են եղել:

Ինձ այդ ըոպէ այնպէս էր թուում, թէ արար աշխարհը գիտէ, որ Սառա-ապլայի հաւի ձագերը ես եմ մորթել, մեր մարագի յարզի մէջ ես եմ պահել: Նորից մի անգամ այդ ըոպէ նայեցի մեր մարագի դռան. հէնց այդ վայրկեանին Սառա-ապլան հայեացքն ուղղեց դէպի ինձ.

—Վահան ջան, մեր հաւի ձագերը հօ չէս տեսել. քիչ առաջ դէպի ձեր մարագի կողմն էին գնացել:

Սիրտս քիչ մնաց ճաքէր. կասես Սառա-ապլան հաստատ իմանում լինէր, որ ես էի իր ձագերը բռնել-մորթել, միայն ինձ այնպէս, փորձի համար էր հարցնում: Ես մնացի կարկամած: Նա

այդ ըոպէ մի այնպիսի ծակող հայեացքով նայեց երեսիս, որ կարծես ասում լինէր. «գիտեմ, վահան ջան, որ իմ ձագերս դու ես մորթել պահել. ախար ինչո՞ւ, ախար ես քեզ ի՞նչ էի արել, ախար մեղք չէի՞ն ձագերը»...

—Չէ—, յուզմունքից հազիւ տիրապետելով ինձ թոթովեցի ես:

—Էդտեղ երթիկները հօ չէ՞ն երևայ—, նորից հարցրեց նա:

—Էստեղ հաւի ձագերն ի՞նչ գործ ունին—, յանդուգն վրայ բերի ես և աշխատեցի որքան կարելի է Սառա-ապլան ինձ հետ շուտ ընդհատէր իր խօսակցութիւնը, իր տանջող աչքերով երեսիս նայելը:

—Հապա ի՞նչ եղան, ո՞ւր գնացին, Աստուած ջան. մէկ հատ չէ, երկու հատ չէ, վեց հատ, վեց հատ իրար հետ—, սրտի մրմուռը քամեց Սառա-ապլան և մոլոր քայլերն ուղղեց դէպի միւս դրացիների դռները:

Ես կանգնած տեղումս մնացի քարացած. չգիտէի ի՞նչ անէի, ո՞ւր գնայի, որ յարզի տակ պահած հաւի ձագերն ու Սառա-ապլայի վշտալի աչքերը մոռանայի:

Մութը հետզհետէ իջնում, իր լայն թևերը տարածում էր երկրի երեսին, ու ցուրտը սաստկանում:

Ես երկար այդպէս կանգնած մնացած նայում էի մերթ երկնքի երեսին պատառոտուած

ամպերին, մերթ նրանց արանքներում ցոլացող աստղերին, մերթ դէպի մեր մարագի կողմը, երբ յանկարծ լսեցի հօրեղբօրս ձայնը.

—Վահան, այդտեղ ցրտին ի՞նչ էս կանգնել. ցած իջի, կը մրսիս:

Դողդող քայլերս ուղղեցի կտուրից ներքև տանող սանդուխքներով ցած:

—Նայիր, մրսել էս, կը դողաս, երեսիդ գոյնը գնացել է—, նկատեց հօրեղբայրս:

Բայց իմ դողալս մրսելուց չէր:

IV.

Հետևեալ առաւօտ, երբ վեր կացայ տեղիցս և պատրաստուեցի գնալու յարդի, հօրեղբօրս կինը յայտնեց, որ հօրեղբայրս արգէն մեծ քթոցով գընացել է մարագ: Սարսափն ինձ պատեց, երբ մտածեցի, որ նա կարող էր յարդը այն տեղից լցնել, որտեղ պահած էին Սառա-ապլայի հաւի ձագերը. էլ ի՞նչ երեսով պէտք է նայէի նրա դէմքին, ի՞նչ պատասխան պիտի տայի նրան, Աստուած իմ: Ծանր խոհերով յուզուած դուրս եկայ բակը և տեսայ հօրեղբօրս՝ քթոցը շալակին գալիս: Նա այդ բոպէ սովորականից տարօրինակ թուաց ինձ. նրա գլուխը կախ էր, դէմքը դալուկ, արտայայտութիւնը մտածկոտ. կարծես նա մի բանից վշտացած կամ վիրաւորուած լինէր:

—Եկ, քթոցը շալակիցս վէր առ—, բակում տեսնելով ինձ խօսեց նա:

Ես գնացի նրա ետեից և մտածում էի. «է, փառք Աստու, ոչինչ չէ գտել, որ ոչինչ չասաց»:

Սակայն մի ինչոր անսովոր սարսուռ տիրել էր իմ մարմնին, և սիրտս ճմլուում էր:

Մտանք գոմ:

Ես հօրեղբօրս շալակից վայր առայ քթոցը:

Հօրեղբայրս շուռ գալով դէպի քթոցը՝ հանգիստ կերպով ձեռը տարաւ յարդի երեսին, կասես հարթելու համար, ապա յանկարծ ներս կոխեց դարմանի մէջ և այնտեղից հանեց Սառա-ապլայի հաւի ձագերից մէկը. նա բռնեց ձագի մի թևի ծայրից. նրա միւս թևն ու ոտքերը կախուեցին օդի մէջ իրարից բաժան այնպիսի մի ձևով, որ կարծես իմ երեսիս գրող չափում լինէին:

Հօրեղբայրս նայեց երեսիս և խօսեց.

—էս ի՞նչ է, որդի:

Հարցը այնքան մեղմ էր, միևնոյն ժամանակ այնքան ազդու, որ ես ամաչելուցս չկարողացայ նայել նրա երեսին. հայեացքս յառեցի գետնին և տեղումս մնացի քարացած:

Ես կարծում էի, թէ հօրեղբայրս յարդի մէջ ընդամենը մի ձագ է գտել. բայց որքան եղաւ սարսափս, երբ նա իրար ետեից քթոցի միջից հանեց երկրորդը, երրորդը, վերջապէս վեցերորդը. հանեց, իրար կողքի շարեց յարդի երեսին ու դառաւ.

—էս ի՞նչ էս արել զաւակս. դու սպանութիւն ես կատարել, դու լացացրել ես սրանց մօրը: Իմ լացս բռնեց:

— Ապա սրանց աղքատ տէրը, որ երէկ երեկոյ փողոցներն ընկած այնպէս տրորուելով իր հաւի ձագերն էր որոնում... Դու յանցանք ես կատարել. դու այս ձագերը մորթել ես նրա համար, որ ուտես. բայց յանցանքը կուտուի՞, ասա՛:

Ես չէի իմանում ինչ անէի:

Այդ ըոպէ նա վերցրեց կողքին, մսուրի մօտ դրուած բահը և սկսեց գոմի մի անկիւնը փորել:

Ես նրա կողքին կանգնած տեսնում էի, թէ ինչպէս նա «Տէր, Դո՛ւ ներիր» մրմնջալով արագարագ բահը զարնում էր գետին, հողը դուրս ածում և փոքրիկ ձագերի համար գերեզման պատրաստում:

Երբ փոսիկը պատրաստեց՝ դառաւ ինձ.

Բեր էստեղ էն անմեղ հաւի ձագերը, որոնք դու սպանել ես, բեր, քո ձեռովդ դիր գերեզման, քանի մարդ չէ տեսել կատարածդ մեղքը, բեր, թաղիր էստեղ, թաղիր նրանց հետ և յանցանքդ, որ գետնի տակ գնայ մեռնի, բեր, և ինձ խօսք տուր, որ այլևս սպանութիւն չես կատարէ և ուրիշի բարիքին ձեռք չես տայ, բեր:

Ես անկարող դարձած որևէ խօսք ասելու՝ մօտեցայ հօրեղբօրս, բռնեցի նրա ձեռքը, համբոյններով և արտասուքով ծածկեցի այն, կրկնապատիկ ներողութիւն խնդրելով կատարածս յանցանքի համար, ապա ճնշուած սրտով մօտեցայ քթոցին, վերցրի մորթածս ձագերի դիակները, դրի փոսիկի մէջ, վրաները մի քանի բուռ հող

ածեցի, ու, ինչպէս հարազատների վրայ, սկսեցի բարձր-բարձր լալ և արտասուք թափել:

Իսկ հօրեղբայրս այդ ժամանակ շտապով ծածկում էր նրանց դիակները հողով և ձեռի բահով գետնի երեսը հաւասարեցնում էր, հաւասարեցնում:

ԱՐՅՈՒՆՔՆԵՐ *)

Առաւօտ տեղաշորիս մէջ դեռ պառկած էի, երբ ներս մտաւ հօրեղբայրս և յայտնեց, որ մեր սպիտակ մադեանը գիշերս որձ քուռակ է բերել:

Ուրախութիւնից մանուկ սիրտս թնդաց: Շտապով հագայ շորերս, վազեցի դոմ տեսնելու իմ այնքան ժամանակուայ փայփայած երազը: Գոմի դուռը բաց անելու պէս տեսայ նորածինը. նա սաթի նման սև էր և փայլուն. ողորկ, կողմր, սիրո՞ւն:

Ուրախութիւնից խելքս կորցրած՝ վազեցի մօտ նրան գրկելու, համբուրելու:

Իմ այդ յարձակումից վախեցած՝ նա երկու ոստիւն գործեց, մօտեցաւ մօրը և մսուրի հետ կանգնեց:

Մայրը կամացուկ խրխնջաց, հոտոտեց ձագուկին, դունչը տարաւ դէպի նրա գլուխը և կարծես ականջին ասաց. «մի վախիր, դա մեր բարեկամն է», և ինձ թոյլ տուեց մօտենալու:

Ես ձեռս տարայ սևուկի գլխին-բաշին. նա

*) Սոյն պատկերը տպագրուած է «Հօրոտ-Մօրոտ» III գրքի մէջ. բայց սրովհետև նա իր բովանդակութեամբ պատկանում է «Մեր Բարեկամները» պատկերների սերիային, այդ պատճառով գեանդեցի այստեղ ևս:

այնպէս նուրբ էր՝ ինչպէս թաւիշ, այնպէս փափուկ՝ ինչպէս մետաքս. շօշափեցի նրա մէջքը, ոտքերը, փարուեցի վզովը, համբուրեցի դունչն ու երեսը և մի անհուն ուրախութեամբ լցուած՝ ելայ դուրս ընկերներին հաղորդելու իմ բաղաւորութեան մասին:

Եղանակն արդէն գարուն էր. աշխարհի չորս կողմից ջրերը հոգի առած՝ բարձրունքներից թափուում էին ներքև, նախ հարթավայրերում սփռուում, ապա միանալով գետակների ու գետերի հետ՝ դիմում դէպի մայր ծովը:

Բնութեան բոնութեան կապանքներից ազատուած՝ իրենց գլուխները համարձակ դուրս էին հանել ծաղիկն ու խոտը, ծառն ու մացառը: Բացուել էր թռչունների լեզուն. նրանք օրհներգ էին կարգում ազատութիւն պարգևող Արարչին: Հովը թևեր առած ազատութեան աւետիսը տանում, տարածում էր աշխարհի չորս կողմը: Երկրնքի ամպերը կապանքներից ազատուած՝ արձակ լողում էին երկնակամարում, մերթ կայծում, մերթ անձրևում...

Օ—Օ, սրբան ժամանակ է համըացել էր նրանց լեզուն, խաւարել լոյսը, մարել ձայնը, չորացել ուրախութեան արցունքի կաթիլը...

Կենդանիները մի անսահման խնդութեամբ կայտուում էին դալարոտ տեղերում, վեր-վեր թռչում, կեանք վայելում:

Կայտուում էր և իմ սևաթոյր քուռակը. նա

դադար չէր առնում արշաւելուց. շարունակ պըտոյտներ էր գործում մօր շուրջը, վագում-վագ-վզում, էլի մօտենում մօրը, մի երկու ումպ համեղ կաթից ծծում ու դարձեալ շարունակում կայտուել:

Իլիսին երբ երեկոները արօտից գալիս էր գիւղ, ես գնում էի քուռակիս իր մօր հետ տուն բերելու:

Մի օր էլ ըստ սովորականին երբ դարձեալ գնացի նրանց տուն բերելու՝ քուռակս չգտայ իլիսու մէջ, ոչ էլ նրա մօրը: Ինձ համար մի անբացատրելի վշտով համակուած եկայ տուն և եղելուժիւնը յայտնեցի հօրեղբօրս: Հօրեղբայրս գլուխը կախեց, քիչ մտօրեց, ապա ձի նստեց, գնաց փնտռելու:

Ուշ, շատ ուշ գիշեր էր, երբ նա վերադարձաւ տուն և յայտնեց, որ ոչ մի տեղ չէ գտել, վաղն առաւօտ հարկաւոր է աւելի հեռուները որոնել:

Ես ամբողջ գիշերը վշտիցս չկարողացայ քնել. քուռակիս կարօտն ու կսկիծը ինձ տանջում էր. կասես կեանքիս կէսը կորցրել էի: Վերջապէս լուսացաւ և մենք միքանի հոգով գնացինք պարտելու:

Ես գնացի դէպի հարաւ, անցկացայ մի ձորակ, բարձրացայ մեր գիւղի սարի՝ «Գէօզդաղի» գլուխը, ապա թեքուեցի սարի քարքարոտ հարթավայրը, որի անունը մինչ օրս էլ «Գէլըններ»

է. այնտեղ նկատեցի մի սպիտակ փողփողող կէտ. ճանաչեցի այն. դա մեր մադեանն էր. նա զըլուխը կախած մի կէտում անշարժ կանգնած էր. միայն նրա հարուստ սպիտակախառն պոչն էր, որ ծածանւում էր թեթե գարնանային զեփիւռի առջև: Հասայ: Նա ինձ տեսնելու պէս մի վշտալի վրինջ արձակեց և գլուխը նորից կախեց ներքև: Ես աւելի մօտեցայ նրան և տեսայ նրա առջև մի թարմ կմախք. սարսափ եկաւ վրաս, և մի ցնցող սարսուռ անցաւ մարմնիս վրայով. իմ քուռակիս ոսկորներն էին. նրա սև սմբակներից ճանաչեցի ես:

Կսկծից սրտիս ծայրը մըմռաց. ծանր վշտով լցուած նայեցի մօրը և տեսայ, թէ ինչպէս անխօս կենդանին այդ ժամանակ հոտոտում էր իր գաւակի մարմնի մնացորդները և աչքերից հեղեղի պէս արտասուք թափում:

Այդ տեսարանի առջև անկարող եղայ ինքս ինձ պահել. մի խորին ակնածութիւն զգացի դէպի այդ անլեզու, բայց շատ բան ասող մայրը, համակուեցայ նրա վշտով և լցուեցի արցունքներով:

Արդէն ուշ էր. ուղեցայ նրա բաշից բռնել տանել տուն, սակայն նա զժգոհ կերպով շարժեց գլուխը, խլեց բաշը ձեռիցս, Փռկաց և նորից սկսեց գաւակի մնացորդները հոտոտել, լիզել ու արտասուել:

Հօրեղբայրս երկար որոնելուց երբ ոչ մի

տեղ ոչինչ չէր գտել, քայլերն ուղղել էր դէպի
գիւղի հարաւային կողմը: Նա եկաւ գտաւ ինձ և
երբ տեսաւ քուռակի ընկած կմախքն ու նրա վե-
րև իր մօր՝ մադեանի արտասուելը՝ մի քանի ըո-
պէ մնաց արձանացած նայելիս, ապա երեսը
շրջեց դէպի ինձ ու հազիւ լսելի ձայնով թոթովեց.

— Խեղճ անասուն. գայլերն են պատառոտել
կերել, կմախքը թողել են այստեղ —. ապա յամբ
քայլերով մօտեցաւ անխօս կենդանուն, ձեռում
ունեցած թօկը անցկացրեց նրա վիզը և քայլերն
ուղղեց դէպի գիւղ:

Այդ օրուանից մեր սպիտակ մադեանը յա-
ճախ երեկոները տուն չէր գալիս. նրան գտնելու,
տուն բերելու համար ես միշտ գնում էի «Գէլբը-
ները» և շարունակ նրան տեսնում էի այնտեղ իր
զաւակի գերեզմանի վրայ արտասուք թափելիս:

Այն ժամանակ ես զգացի, թէ սրբան վեհ և
սրբան հզօր ես դու, մայրական գութ:



«Ազգային գրադարան»



NL0336113

Քիչսի գրավածառանոցներում վաճառում են հեղինակի հետեւեալ աշխատութիւնները.—

- 1. Երգում, (վիպակ) սակաւաթիւ 40 կ.
- 2. Պատանեկան յուշեր 15 կ.
- 3. Հօրոտ-Մօրոտ I գիրք, պատկ. գիւղ. կեանքից 30 կ.
- 4. " " II " " " " 30 կ.
- 5. " " III " " " " 30 կ.
- 6. Հայ գեղջուկի ալբոմը, I մաս (ղաշտ. գործիք.) 40 կ.
- 7. " " " II " (ամանեղէն և կարասի) 40 կ.
- 8. " " " III " (տնային արդիւնաբերութիւն 40 կ.
- 9. Մեր բարեկամները 15 կ.

Շուտով տպագրութեան կը յանձնուին.—

- 1. Ծիւեր, դրամա 3 գործող.
- 2. Հիւանդանոց, դրամա 4 գործող.
- 3. Յանցանք, էտիւդ, գիւղակ. կեանքից:

Պատրաստ են տպագրութեան համար.—

- 1. Հօրոտ-Մօրոտ, IV գիրք. (պատկերներ գիւղ. կեանքից)
- 2. Գիւղի Շուշանը, վէպ գիւղական կեանքից:

Գրչի տակ է.—

Հայ գեղջուկի ալբոմի IV մասը. (արհեստներ և արհեստական գործիքներ):